Կրթական ծրագիր «Զբոսաշրջություն»

Նախապատրաստման ուղղվածություն՝ 43.03.02 «Զբոսաշրջություն», առկա ուսուցում

Առարկա՝ Ինֆորմատիկա

Աշխատատարություն՝ 144 ակադեմիական ժամ (4 ակադեմիական կրեդիտ, 2-ական յուրաքանչյուր կիսամյակ)

Վերջնական ստուգման ձև՝ ստուգարք

Անոտացիա

«Ինֆորմատիկա» դասընթացը ուղղված է ձևավորելու տվյալների հետ աշխատելու սկզբնական և բազային գիտելիքներ, որոնք անհրաժեշտ են ինտերնետային ռեսուրսների և թվային տեխնոլոգիաների անվտանգ ու արդյունավետ օգտագործման համար՝ ակադեմիական գործունեության շրջանակներում:

Մշտական տեխնոլոգիական փոփոխությունները, հատկապես այն ոլորտներում, որոնք կապված են տեղեկատվական և հեռահաղորդակցման տեխնոլոգիաների հետ, հանդիսանում են գիտելիքների և տվյալ ոլորտի ունակությունների թարմացման նախադրյալներ: Այդ համատեքստում կազմակերպությունների համար անհրաժեշտություն է դառնում ունենալ մասնագետներ, ովքեր տիրապետում են համապատասխան հմտություններին՝ հաջող իրականացնելու գործողություններ, որոնք պահանջվում են աշխատավայրում:

Դասընթացի նպատակն է.

- այնպիսի հմտությունների մշտական զարգացումը, որոնք կապված են տեղեկատվական և հեռահաղորդակցման տեխնոլոգիաների հետ,
- ուսանողների տեխնոլոգիական հմտությունների զբաղվածությունը և նորացումը:

«Ինֆորմատիկա» առարկայի հետևյալ դասընթացը ամբողջությամբ հանդիսանում է գործնական դասընթաց, որի յուրացման արդյունքում ուսանողները ձեռք են բերում գործնական հմտություններ: Դասընթացը ոչ միայն կապահովի անհրաժեշտ «համակարգչային գրագիտություն», այլ նաև համակարգչի հնարավորությունների օգտակար և արդյունավետ օգտագործման հնարավորություն: Զբոսաշրջության ոլորտում արդյունավետ աշխատանքի համար հետագայում անհրաժեշտ կլինի ՏՏ-ից օգտվելու հմտությունների առկայություն: Տվյալ դասընթացը հանդիսանում է հիմնական, բազային մաս, որից հետո ուսանողները կկարողանան հեշտությամբ սովորել ցանկացած համակարգչային ծրագիր, որոնք անհրաժեշտ կլինեն գործնական, գիտահետազոտական և ուսուցողական գործունեության մեջ: Տվյալ առարկայի շրջանակներում ուսանողները կսովորեն գրագետ ձևով կազմել փաստաթղթեր, գիտական աշխատանքներ, նախագծեր, արտացոլել տիպային հաշվարկներ, աշխատել տվյալների բազաների հետ, գտնել պահանջվող ինֆորմացիան: Մանրամասն կծանոթանան Microsoft Office ծրագրային փաթեթի գործիքակազմին: Ուսանողները կսովորեն նաև աշխատել համացանցում տարբեր ծրագրերով, որոնք հնարավորություն են տալիս աշխատել փաստաթղթերի հետ, աշխատել ամպային սերվերներում և առցանց ծրագրերում տվյալների բազաների հետ:

Տվյալ դասընթացի շրջանակներում նախատեսվում է ուսանողներին սովորեցնել համակարգչով և Microsoft Office հավելվածների ծրագրերով աշխատելու գործնական հմտություններ՝ զբոսաշրջության ոլորտում օգտագործելու համար:

Մասնագիտական այլ առարկաների հետ փոխազդեցություն. «Ինֆորմատիկա» առարկան վերաբերվում է մասնագիտական ցիկլի բազային մասին և փոխկապակցված է

ուսումնական ծրագրի այլ առարկաների հետ, քանի որ ստեղծում է բազա տվյալների բազաների և վերլուծության հետագա հավաքման համար:

Ուսանողների գիտելիքների նախնական մակարդակի, ունակությունների և հմտությունների պահանջները.

- ունենալ դպրոցական մակարդակի գիտելիքներ և ունակություններ մաթեմատիկայի և ինֆորմատիկայի ոլորտում,
- տիրապետել համակարգչի հետ աշխատելու տարրական հմտություններին,
- անհրաժեշտ տեղեկատվության ստացման համար կարողանալ օգտագործել Համացանցն ու գրականությունը: